ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան

13.02.2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 3Ա

ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 13-ի թիվ 2 նիստի օրակարգը՝

1. *Արարատի մարզի Գոռավան համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին*
2. *Արարատի մարզի Գոռավան համայնքի ավագանու 08.12.2017թվականի թիվ 41Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*
3. *Արարատի մարզի Գոռավան համայնքի խնամակալության և հոգեբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը հաստատելու մասին և Գոռավան համայնքի ավագանու 2008 թվականի թիվ 07 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին*
4. *Արարատի մարզի Գոռավան համայնքում խմելու ջրի վճար վճարողների հաշվառման, խմելու ջրի վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին*
5. *Արարատի մարզի Գոռավան համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին*
6. *Արարատի մարզի Գոռավան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական, բնակավայրերի հասարակական կառուցապատման և արդյունաբերական օբյեկտների նշանակության հողերից օտարման նպատակով տարածքներ առանձնացնելու և մեկնարկային գին սահմանելու մասին*

Ազիզյան Վազգեն

Թադևոսյան Կարեն

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Նիկողոսյան Վահե

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան

13.02.2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 4Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 5-րդ կետի և 83 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Գոռավան համայնքի 2017թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ 6 *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

Ազիզյան Վազգեն

Թադևոսյան Կարեն

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Նիկողոսյան Վահե

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԲԱՋԻԿՅԱՆ

Գոռավան համայնքի 2017թ. տարեկան բյուջեի

Մուտքերի կատարողական

hh	Եկամուտի անվանումը	տարեկան պլանը /նախ.որ/			փաստացի գանձում			տոկոս
1	Հողի հարկ	7200.00		199.49	7399.49			102.8
2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	5500.00		245.07	5745.07			104.5
3	Գույքահարկ շենք շինություններից	20.40		13.46	33.86			166.0
4	Տեղ. Տուրք Օդու և ծխախ. Վաճ. Թույլտ	240.00		292.80	532.80			222.0
5	Տեղ. Տուրք շին.Թույլտվ. և աճուրդ մրց	250.00		9.69	259.69			103.9
6	Վարձակալական վարձավճար	3700.00		-313.72	3386.28			91.5
7	Այլոչ հարկային եկամ /խմելու ջրի վար	1680.00		46.80	1726.80	28.00		102.8
8	Աղբահանություն	1300.00		136.40	1436.40	129.60		110.5
10	Ընթացիկ տարվա դոտացիա	47675.1		0.00	47675.10			100.0
11	Այլ դոտացիա	0.0		0.00				0.0
12	Ծնողական վճար	2000.0		50.60	2050.60			0.0
13	Օտարումից մուտքեր	0.00			3511.10			######
14	մնացորդ ուղում վ/բ պարտքերի մարո	0.00						0.0
15	մնացորդ ուղում ֆ/բ	5829.90			1598.80			27.4
	Ընդամենը	75395.40			75355.99			99.9
	Վարչական բյուջ. հատկ ֆոնդային բյու				0			0.0

Ծախսերի կատարողական

hh	Ծախսերի անվանումը	տարեկան պլանը			փաստաց	վ/բ	ֆ/բ	տոկոս
1	2	3			4			5
1	կառավարման ապարատ1-1-1	28380.45	-0.13		28380.32	23420.92	4959.40	100.0
2	Աղբահանություն 5-1	2778.91	-1.07		2777.84	2777.84		100.0
3	Մշակույթի տներ ակումբներ	2300.90	-16.15		2284.75	1907.25	377.50	99.3
4	Գիշեր. Լուսավոր 6-4	5304.68	0.00		5304.68	5304.68		100.0
5	Սոց. պաշտպ 10-7	3931.00	0.00		3931.00	3931.00		100.0
6	Զրամատակարարում 6-6	9836.53	-31.45		9805.08	9805.08		99.7
7	Հանգիստ մշ կրոն 8-5	5396.15	-111.88		5284.27	4634.27	650.00	97.9
8	Գույքի պետ զբանցում 1-6	250.00	0.00		250.00	250.00		100.0
9	Արտադպրոցական դաստիրակությունն	0.00	0.00		0.00			0.0
10	Հանրակրթություն 9-2	1801.80	0.00		1801.80	360.00	1441.80	100.0
11	Նախադպր. կրթ. 9-1	14495.58	0.00		14495.58	14495.58		100.0
12	Բարձրագ. կրթություն 9-4	930.00	0.00		930.00	930.00		100.0
13	Աջակցություն հասարակ. կազմկ 10-	1300.00	0.00		1300.00	1300.00		100.0
14	օտարումից մուտքեր	-1710.60	1710.60					0.0
16	Ասֆալտ-բետոնյա ծածկ. Մաքրում	200.00	0.00		200.00	200.00		100.0
17	կենսաբազմազանություն ծառեր տնկի	200.00	0.00		200.00	200.00		100.0
18	Վ/բ պահուստ. ֆոնդ				0.00			0.0
19	Ֆ/բ պահուստ. ֆոնդ							
19	Ընդամենը	75395.40			76945.32	69516.62	7428.70	102.1

Մնացորդ վ.բյու ---------- 729.47

Ֆ.բյու ---- ---------- 1912.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան

13.02.2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 5

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 41Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով 'Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գոռավան համայնքի ավագանու << Գոռավանի համայնքապետարանի աշխատակազմի և Գոռ մանկապարտեզ Հասարակական ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2018թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին>> 08.12.2017 թվականի թիվ 41Ն որոշման Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ	" դեմ	ձեռնպահ
Ազիզյան Վազգեն		
Թադևոսյան Կարեն		
Հայրապետյան Անդրանիկ		
Մելիքսեթյան Վահրամ		
Նիկողոսյան Վահե		
Վարդանյան Սուրեն		

Համայնքի ղեկավար՝ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ

Հավելված
Գորավան համայնքի ավագանու
2018թ. Փետրվարի 13-ի թիվ 5 Ն որոշման

"ԳՈՌԱՎԱՆԻ ԳՈՌ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ" ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատողների ընդհանուր թիվը 15

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/
Տնօրեն	1	130.000
Հաշվապահ-գանձապահ	1	80.000
Դաստիարակի օգնական	3	80.000
Դաստիարակ	3	100.000
Խոհարար	1	78.000
Խոհարարի օգնական	0.5	37500
Տնտեսվար	0.5	39.000
Բուժքույր	0.5	39.000
Դաշնակահար	0.5	37500
Լվացարար	0.5	40.000
Դերձակ	0.5	40.000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան

13.02.2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 6

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով՝պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 02.06.2016թ թիվ 631-Ն որոշումը 'համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. *Հաստատել Գոռավան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը՝*

1. *Բազիկյան Արսեն հանձնաժողովի նախագահ՝ /համայնքի ղեկավար/*

2. *Օհանյան Նարինե հանձնաժողովի քարտուղար՝ /աշխատակազմի քարտուղար/*

3. *Գրիգորյան Վահե հանձնաժողովի անդամ /համայնքի ղեկավարի օգնական/*

4. *Ամիրջանյան Գայանե հանձնաժողովի անդամ / <<Գոռավանի Գոռ մանկապարտեզ >> ՀՈԱԿ-ի տնօրեն/*

5. *Հայրապետյան Անդրանիկ հանձնաժողովի անդամ*

/ավագանու անդամ /

6. Բալումյան Սուսան հանձնաժողովի անդամ՝ /գրադարանավար/

7. Սահրադյան Դոնարա . հանձնաժողովի անդամ՝ /համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ/

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2008թ-ի №7Ն որոշումը

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզյան Վազգեն

Թադևոսյան Կարեն

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Նիկողոսյան Վահե

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ. ԳՈՌԱՎԱՆ 13.02..2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 7Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել խմելու ջրի վճար վճարողների հաշվառման, խմելու ջրի վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ 6 *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

Ազիզյան Վազգեն

Թադևոսյան Կարեն

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Նիկողոսյան Վահե

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԲԱԶԻԿՅԱՆ*

Հավելված
Գոռավան համայնքի ավագանու
2018 թվականի փետրվարի 13-ի
N 7-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ,ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Գոռավան համայնքում խմելու ջրի վճար վճարողների հաշվառման,խմելու ջրի վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:

2.Խմելու ջրի վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում ՀՀ Կառավարության 2004թ. 1N30-Ն որոշման և «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման կանոնները հաստատելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016թ. N378-Ն որոշմանն համապատասխան՝ խմելու ջրի վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Գոռավան համայնքի ավագանու որոշումը:

II.Խմելու ջրի վճար վճարողների հաշվառումը

3. Ջրամատակարարման համակարգին նոր միացումներ կատարող բաժանորդն օգտագործված (սպառված) ջրի ծավալը հաշվառելու համար պետք է տեղադրի անհրաժեշտ տրամագծի և ճնշման խմելու ջրի ջրաչափական սարք (ջրաչափ), իսկ ջրաչափի չտեղադրման դեպքում բաժանորդի օգտագործած (սպառած) ջրի ծավալը հաշվարկվում է Գոռավան համայնքի ավագանու սահմանված կարգով: Տեղադրված ջրաչափը պետք է համապատասխանի դրա տեղադրման տեխնիկական պայմաններին և պետական ստանդարտների պահանջներին, պետք է լինի ստուգաչափված ու կապարակնքված՝ ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման լիազորված մարմնի կողմից:

Ջրաչափը ձեռք է բերվում և տեղադրվում բաժանորդի հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Դիմող անձից Նոր միացման համար գանձվում է միացման վճար՝ 20000 (քսան հազար) դրամ:

5.Նոր միացման դեպքում ջրաչափը տեղակայվում է Բաժանորդի սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետող տարածքից դուրս՝ Սահմանազատման կետում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Սահմանազատման կետին հնարավոր ամենամոտ կետում:

Ջրաչափով Ծառայության մատուցման դեպքում Բաժանորդին մատուցված Ծառայության քանակը հաշվարկվում է ջրաչափի գրանցած ցուցմունքներով:

6.Խմելու ջրի վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:

7.Խմելու ջրի վճարողների հաշվառումն իրականացնում են Գոռավանի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակիցները:

III.Խմելու ջրի վճարի հաշվարկումը

8.Խմելու ջրի վճարի հաշվարկը կատարվում է ելնելով

շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝

1) <u>բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար</u>

ա) տեղադրված ջրաչափի ցուցմունքով՝ 1խմ՝ը 150 դրամ սակագնով,

բ) Առանց ջրաչափ սարքի ջրամատակարարման դեպքում փաստացի բնակվող անձերի և անասունների քանակով, ընդ որում մեկ անձը ամսական 500 դրամ, խոշոր եղջերավոր անասուն մեկ գլուխը ամսական 500 դրամ, մանր եղջերավոր անասուն մեկ գլուխը ամսական 200 դրամ կտրվածքով

2) <u>այլ շենքերի կամ շինությունների համար՝ Գոռավան համայնքի ավագանու կողմից սահմանված կարգով՝</u>

8.2.1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝

ա) տեղադրված ջրաչափի ցուցմունքով՝ 1խմ՝ը 180 դրամ սակագնով,

բ) Առանց ջրաչափ սարքի ջրամատակարարման դեպքում ամսական 1000 դրամ սակագնով

8.2.2) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝

ա) տեղադրված ջրաչափի ցուցմունքով՝ 1խմ՝ը 200 դրամ սակագնով,

բ) Առանց ջրաչափ սարքի ջրամատակարարման դեպքում ամսական 2000 դրամ սակագնով

8.2.3) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝

ա) տեղադրված ջրաչափի ցուցմունքով՝ 1խմ՝ը 180դրամ սակագնով,

բ) Առանց ջրաչափ սարքի ջրամատակարարման դեպքում յուրաքանչյուր երեխայի համար ամսական 30 դրամ սակագնով

8.2.4) անասնագոմերում

ա) տեղադրված ջրաչափի ցուցմունքով՝ 1խմ՝ը 200դրամ սակագնով,

բ) Առանց ջրաչափ սարքի ջրամատակարարման դեպքում անասունների քանակով, ընդ որում խոշոր եղջերավոր անասուն մեկ գլուխը ամսական 500 դրամ, մանր եղջերավոր անասուն մեկ գլուխը ամսական 200 դրամ կտրվածքով

8.2.5) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի բազմաբնույթ տնտեսական գործունեություն,խմելու ջրի վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով:

IV.Խմելու ջրի վճարի հաշվարկումը և գանձումը

9.Խմելու ջրի վճարի հաշվարկումը և գանձումը իրականացնում են Գոռավանի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակիցները:

10. Գանձողը ստանում է Գոռավանի համայնքապետարանի կողմից տրամադրված՝ խմելու ջրի վճարի կանխիկ գանձման համար նախատեսված անդորրագրերը, որի համար Գոռավան համայնքի ղեկավարի և գանձողի միջև կնքվում է անդորրագրերի հանձնման և ընդունման արձանագրություն:

11. Համակարգողն իրականացնում է գանձողի կողմից գանձված և հայտի դեպքում՝ անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:

12. Գանձողը ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների, ինչպես նաև դրանց պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:

13. Գանձողը պարտավոր է տվյալ օրվա գանձված գումարը մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 16.00-ը բանկային կամ փոստային համակարգի միջոցով գումարը փոխանցել համապատասխան հաշվին, իսկ անդորրագրերը՝

մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը, մուտքագրել տվյալների հաշվառման շտեմարան:

Գանձված անդորրագրերի երկրորդ օրինակը՝ համապատասխան ամփոփագրով, գանձողը պարտավոր է հանձնել աշխատակազմին՝ մինչև գանձված գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15.00-ն:

14.Խմելու ջրի վճարի հաշվառման և գանձման լիազորություններով օժտված աշխատակիցը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից խմելու ջրի վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների վերաբերյալ:

V.Խմելու ջրի վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

15.Խմելու ջրի վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

16.Խմելու ջրի վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար խմելու ջրի վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված խմելու ջրի վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

VI. Այլ դրույթներ

17.Խմելու ջրի վճար վճարողների գրանցման մատյանի, խմելու ջրի վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, խմելու ջրի վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Գոռավան համայնքի ղեկավարի կողմից:

18. Բաժանորդի կողմից օգտագործված ջրի ծավալի նվազեցման նպատակով ջրաչափի բնականոն աշխատանքի խախտման, ջրաչափի կողանցմամբ ջրընդունման, ջրաչափի կապարակնիքների վնասման (պոկման, կեղծման) և այլ

միտումնավոր խախտումների հայտնաբերման դեպքերում ջրամատակարարը խախտման հայտնաբերման պահին բաժանորդի կամ նրա ներկայացուցչի հետ համատեղ արձանագրում է խախտումը և կազմում կանոնների խախտման ակտ (N 1 ձև), և բաժանորդը կրում է պատասխանատվություն՝ 50000 (հիսուն հազար) դրամի չափով օրենքով սահմանված կարգով: Կանոնների խախտման ակտը հատուկ հաշվառման փաստաթուղթ է և հիմք է ծառայում բաժանորդի կողմից օգտագործված ջրի ծավալի վերահաշվարկման (ճշգրտման) համար:

19. Խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործելու դեպքում արձանագրվում է խախտում և խախուտմը հայտնաբերելու պահին բաժանորդի կամ նրա ներկայացուցչի հետ համատեղ արձանագրում է խախտումը և կազմում կանոնների խախտման ակտ (N 2 ձև), և բաժանորդը կրում է պատասխանատվություն՝ 50000 (հիսուն հազար) դրամի չափով օրենքով սահմանված կարգով:

20.Ջրամատակարարման համակարգերին կատարված ինքնակամ (ապօրինի) միացումների հայտնաբերման դեպքում սահմանվում է տուգանք 50000 (հիսուն հազար) դրամի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Գոռավան 13.02.2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 8

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Գոռավան համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը համաձայն հավելվածի:

Կողմ 6 *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

Ազիզյան Վազգեն

Թադևոսյան Կարեն

Հայրապետյան Անդրանիկ

Մելիքսեթյան Վահրամ

Նիկողոսյան Վահե

Վարդանյան Սուրեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԶԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ. Գոռավան

13.02.2018թ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ. 9Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ,ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67,68 հոդվածների պահանջներով՝ Գոռավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գոռավան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության, բնակավայրերի հասարակական կառուցապատման և արդյունաբերական նշ. օբյեկտների հողերից օտարման նպատակով առանձնացնել հետևյալ հողատեսքերը՝
   - Ծածկագիր 0249-0228-ից 1,5 հա գյուղ. նշ. այլ, մերձարաքսյան գոտի
   - Ծածկագիր 0249-0228-ից 0,6 հա գյուղ. նշ. այլ, մերձարաքսյան գոտի
   - Ծածկագիր 0500-0001 0,096 հա գյուղ նշ. արոտ, մերձարաքսյան գոտի
   - Ծածկագիր 0074-0003 0,03168 հա գյուղ նշ. այլ, մերձարաքսյան գոտի
   - Ծածկագիր 0249-0004 3,65 հա գյուղ նշ. այլ, ՎՆԱ գոտի
   - Ծածկագիր 0249-0004 4,53 հա գյուղ նշ. այլ, ՎՆԱ գոտի
   - Ծածկագիր 0242-0007 5,15 հա գյուղ նշ. արոտ մերձարաքսյան գոտի
   - Ծածկագիր 0242-0007 12,0 հա գյուղ նշ. արոտ մերձարաքսյան գոտի
   - Ծածկագիր 0249-0228-ից 2,5 հա գյուղ նշ. այլ, մերձարաքսյան գոտի
   - Ծածկագիր 0249-0074 1,01932 հա գյուղ նշ. այլ, ՎՆԱ գոտի
   - Ծածկագիր 0039-0018 0,00247 հա բնակավայրերի հասարակական կառուցապատում
   - Ծածկագիր 0291-0002 0,03787 հա արդյունաբերական նշ. օբյեկտների հողեր
   - Ծածկագիր 0074-0001 0,08114 հա արդյունաբերական նշ. օբյեկտների հողեր
2. Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդ-վաճառքով օտարել նշված տարածքները:
3. Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով:

Կողմ 6 դեմ 0 ձեռնպահ 0

Ազիզյան վազգեն
Թադևասյան Կարեն
Հայրապետյան Անդրանիկ
Մելիքսեթյան Վահրամ
Նիկողոսյան Վահե
Վարդանյան Սուրեն

Համայնքի ղեկավար՝ Ա. ԲԱՋԻԿՅԱՆ